# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Գործուղված անձիք**

Գայանե Գաբրիելյան
Նախարարի տեղակալ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Թուրքիա, Ստամբուլ

3. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում).**

2023 թվականի մայիսի 11-ին և 12-ին Ստամբուլի Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀԶԿ) կենտրոնում (Թուրքիա) կայացել է Կանաչ գործողությունների (GREEN Action) աշխատանքային խմբի 2023 թվականի ամենամյա հանդիպումը, որին մասնակցել է շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Գայանե Գաբրիելյանը:

2016 թվականից GREEN Action Task Force-ը եզակի հարթակ է շահագրգիռ ՏՀԶԿ երկրների և գործընկերների համար՝ Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների հետ (EECCA) աշխատելու համար, որը ներկայումս ներառում է Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Մոլդովա (Մոլդովա), Ղազախստան, Ղրղզստան (Ղրղզստան), Տաջիկստան, Թուրքմենստան, Ուկրաինա և Ուզբեկստան:

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

**GREEN Action աշխատանքյաին խմբի 2023 ամենամյա հանդիպում**

Աշխատանքային խմբի հանդիպմանը մասնակցել են նաև Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրներից բարձրաստիճան պաշտոնյաներ (EECCA), ՏՀԶԿ անդամ երկրներն ու զարգացման համագործակցության գործընկերները, ֆինանսական հաստատությունները:

Աշխատանքային խումբը նպաստում է տարածաշրջանում շրջակա միջավայրի և սոցիալական բարեկեցության բարձրացմանն ուղղված քաղաքականության մշակմանը և իրականացմանը՝ ստեղծելով հզոր տնտեսական աճի և արժանապատիվ աշխատատեղերի հնարավորություններ:

5. **Քննարկված թեմաները (հարցերը).**

2023 թվականին կայացած ամենամյա հանդիպման ընթացքում աշխատանքային խմբի անդամներն ու գործընկերները քննարկել են.

- 2022 թվականի հոկտեմբերին «Շրջակա միջավայր Եվրոպայի համար» 9-րդ նախարարական համաժողովում ստացված աշխատանքային խմբի նոր մանդատի համաձայն՝ GREEN Action աշխատանքային խմբի ծրագրի իրականացումը և առաջնահերթ աշխատանքային թեմաները,
- EECCA-ում կանաչ տնտեսության անցման հետ կապված բովանդակային խնդիրները,
- մասնավոր հատվածի ներգրավվածությունը,
- մասնավոր հատվածի ներդրումների խրախուսումը և մոբիլիզացումը,
- կենսաբազմազանության քաղաքականության ներկա վիճակն ու հեռանկարները,
- GREEN Action Task Force ծրագրի 2023-2024 թվականների աշխատանքի իրականացումը և բյուջեն,
- հանրային բնապահպանական ֆինանսավորման դերը բնապահպանական/կանաչ ներդրումների խթանման գործում,
- Կառավարությունների առջև ծառացած հիմնական մարտահրավերները բնապահպանական պետական ծախսերի կառավարման հարցում:

6. **Հանդիպումները, ելույթները.**

Գայանե Գաբրիելյանն իր խոսքում ներկայացրել է ՀՀ-ի կողմից մշակվող կանաչ ֆինանսական գործիքների հանրայնացման ընթացքը՝ այդ թվում կանաչ բոնդեր, կլիմայական բոնդեր, տաքսոնոմիա:

Բացի այդ կատարված աշխատանքները, Կլիմայական գործողություններ ֆիսկալ ռիսկերի մասով:

Խոսքում եղել են գործնական առաջարկություններ Հայաստանում Կանաչ բոնդերի գործիքի ներդրման պետության կողմից շրջանառու ֆոնդի ձևավորման, Կանաչ կլիմայական ֆոնդից միջոցների գեներացման մեխանիզմների մասին, և Հայաստանում ներդրվող մոդելի այլ առանձնահատկությունների մասին:

7. **Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Աշխատանքային խմբի ընթացիկ աշխատանքի, (2023-2024) աշխատանքային ծրագրի և հետագա աշխատանքի վերաբերյալ տրամադրվել է թարմացված տեղեկատվություն:

Հանդիպման ժամանակ կայացել է 2023-2024 թվականների աշխատանքային խմբի բյուրոյի անդամների ընտրություն: Աշխատանքային խմբի բյուրոն կազմված է ՏՀԶԿ

երկրների չորս ներկայացուցիչներից (մեկը՝ համանախագահ և երեքը՝ որպես փոխնախագահ) և ԵՏՀՀ երկրների չորս ներկայացուցիչներից (մեկը՝ որպես համանախագահ և երեքը՝ որպես փոխնախագահներ)։ Բյուրոն ընտրվում է երկու տարի ժամկետով։

2023 թվականին կայացած բյուրոյի անդամների ընտրություններում շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Գայանե Գաբրիելյանը ընտվել է աշխատանքային խմբի բյուրոն փոխնախագահ։

**8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Առաջարկվել է բյուրոյի 1-ին հանդիպումը կազմակերպել ՀՀ-ում։

Հաջորդ հանդիպումը որոշվել է իրականացնել 2024 թ-ի մայիսի 16-17-ին, իսկ բյուրոյի հանդիպումը իրականացվում է կողմերի հանդիպումից 6 ամիս առաջ, որը ենթադրում է մոտ 10 մասնակիցների հյուրընկալում 3 օրով, որի ընթացքում հաստատվում են ընթացիկ տարբեր գործողությունները, ֆինանսական բաշխվածությունը, բովանդակային տարբեր հարցեր, երկրների օրակարգի վերաբերյալ հարցեր և այլ գործընթացներ կապված աշխատանքային խմբի գործունեության հետ։

*Գործուղվող՝ Գայանե Գաբրիելյան*